ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

09. 09. 2023 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 13-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի (լուծարքային շրջանը ներառյալ) ամփոփում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի՝ 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
5. Ֆակուլտետի՝ 2023-24 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրման և հաստատման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
6. Ընթացիկ հարցեր.
   - Ամբիոններում 2023-2024 ուստարվա առարկայական ծրագրերի և փաթեթների առկայության մասին (զեկուցողներ՝ **ամբիոնների վարիչներ, Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի մասին ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել են առկա ուսուցման 275 և հեռակա ուսուցման 183 ուսանողներ: Ս.թ. օգոստոսի 25-29-ն ընկած ժամանակահատվածում անցկացվել է երկրորդ լուծարքային շրջանը, որի արդյունքների համաձայն՝ ֆակուլտետում 1 ուսանող հեռացվել է առկա ուսուցման համակարգից («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», 2-րդ կուրս), հեռակա ուսուցման համակարգից՝ դարձյալ 1 ուսանող («Հոգեբանություն», 2-րդ կուրս):

Առկա ուսուցման «Պատմություն» մասնագիտության 2 ուսանողներ կուտակել են առարկայական պարտքեր, 1 ուսանող կրկնել է «Ֆրանսերեն - 1» դասընթացը:

Առկա ուսուցման համակարգից հեռակա տեղափոխվելու համար դիմել է 4 ուսանող, իսկ հեռակայից առկա տեղափոխվելու համար՝ 5 ուսանող: Առկա ուսուցման 1 ուսանող դիմել է կրթական ծրագիրը փոխելու («Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությունից «Անգլերեն լեզու և գրականություն» անցնելու) համար: Առկա ուսուցման 2 ուսանող էլ սեփական դիմումի համաձայն ազատվել է մասնաճյուղից: Ներկայացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի (լուծարքային շրջանը ներառյալ) ամփոփման մասին Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին էր ուղարկվել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը, որում նախորդի համեմատ առկա են որոշ փոփոխություններ: Իր դիմումի համաձայն մասնաճյուղից ազատված Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Դավիթ Թինոյանի փոխարեն առաջարկվել է գրադարանի վարիչ, նույն ամբիոնի դասախոս Վլադիմիր Պողոսյանի թեկնածությունը: Ֆակուլտետի գիտխորհրդի անդամ 4 ուսանողների փոխարեն, ովքեր նախորդ ուստարում ավարտել են համալսարանը, առաջարկվել են 3-րդ կուրսի ուսանողների թեկնածություններ՝ Իդա Վիգենի Ռնազյան («Հոգեբանություն»), Անահիտ Թաթուլի Թելոյան («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»), Ռուզաննա Արարատի Մխիթարյան («Ռուսաց լեզու և գրականություն») և Ռիմա Մարտունի Եգանյան («Հայոց լեզու և գրականություն»): Քանի որ Ռուզաննա Մխիթարյանը անձնական խնդիրների պատճառով հրաժարվել է ընդգրկվել գիտխորհրդի կազմում, ուստի նիստում առաջարկվեց «Անգլերեն լեզու և

գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի Էդիտա Էդիկի Թամամյանի թեկնածությունը:

Նիստի մասնակիցները հավանություն տվեցին ներկայացված թեկնածություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ տիկին Կ. Պողոսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը և հաստատմանն է ներկայացվել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանը, որտեղ ըստ ամիսների ներակայացված են այս ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի հետ կապված հիմնական աշխատանքներին վերաբերող և ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի անդամների կողմից կատարվեցին աշխատանքային պլանի որոշ դրույթների փոփոխության վերաբերյալ առաջարկություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանը՝ առաջարկված փոփոխություններով հանդերձ:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-ին հարցի մասին ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի՝ 2022-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի պահանջներից ելնելով՝ կազմվել է ֆակուլտետի՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի

աշխատանքային պլանը, որի ձևաչափը մշակվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից: Աշխատանքային պլանում հստակ ներկայացված են ռազմավարական խնդիրները և գործողությունները՝ իրենց կատարման ժամկետներով, պատասխանատուներով, համագործակցողներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի՝ 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանն ուղարկել Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին՝ վերանայման և տնօրենի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու նպատակով ֆակուլտետի գիտական խորհուրդը պետք է առաջադրի անվանական կրթաթոշակի թեկնածուների: Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի համաձայն՝ տրվող անվանական կրթաթոշակներին կարող են հավակնել 4 և ավել կիսամյակ անընդմեջ գերազանցություն ունեցող ուսանողները:

Զեկուցողը նշեց, որ «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Հովսեփի Բաղրամյանի թեկնածությունը, ով ունի 6 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Պատմություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Միհերի Մելիքսեթյանի թեկնածությունը, ով ունի 5 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիա Արտավազդի Եղոյանի թեկնածությունը, ով ունի 6 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Հայկի Ավետիսյանի թեկնածությունը, ով ունի 6 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Արփինե Վահեի Վանեսյանի թեկնածությունը, ով ունի 6 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«ԵՊՀ» անվանական կրթաթոշակի համար ֆակուլտետից ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիա Սմբատի Իսկանդարյանի թեկնածությունը, ով ունի 6 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակի համար ֆակուլտետից ներկայացվում է «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիանա Խաչատուրի Դալլաքյանի թեկնածությունը, ով ունի 6 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Կարինե Անդրանիկի Մուքայելյանի թեկնածությունը, ով ունի 5 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Ք. Հարությունյանը, Վ. Ավագյանը, Կ. Պողոսյանը, Լ. Թումանյանը: Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները հավանություն տվեցին առաջադրված թեկնածություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Առաջադրված ուսանողների թեկնածությունները ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Ընթացիկ՝ 6-րդ հարցի մասին զեկուցեցին ամբիոնների վարիչները՝ նշելով, որ ամբիոններում 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական ծրագրերը և փաթեթները հիմնականում առկա են, որոշ ծրագրեր և փաթեթներ վերանայման ընթացքի մեջ են և սեղմ ժամկետներում վերջնական տեսքով կներկայացվեն ամբիոններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Ք. Հարությունյանը, Վ. Ավագյանը, Կ. Պողոսյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը: Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը ամբիոնների վարիչներին հանձնարարեց հետևողական լինել, որ առաջին և երկրորդ կուրսերում դասավանդող դասախոսներն անպայմանորեն առաջնորդվեն գնահատման նոր չափանիշներով:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական ծրագրերի և փաթեթների վիճակը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան